

**ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ**

**ԼՈՒՍԻՆԵ ՀԱՄԱՋԱՍՊԻ ԾՊՆԵՑՅԱՆ**

**ՀՀ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՄՐՅՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ  
ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ  
ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

**Ը.00.02 - «Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և  
կառավարում» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի  
գիտական աստիճանի հայցման ատենախոսության**

**ՍԵՂՄԱԳԻՐ**

**ԵՐԵՎԱՆ 2024**

Ատենախոսության թեման հաստատվել է Հայաստանի ազգային ազրարային համալսարանում

Գիտական ղեկավար՝ Տնտեսագիտության թեկնածու, դոցենտ ԱՇՈՏ ԵՐՋԱՆԻԿԻ ՈՍԿԱՆՅԱՆ

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ Տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր ՎԱՐԴԱՆ ԲԱԲԿԵՆԻ ԲՈՍԱՆՋՅԱՆ

Տնտեսագիտության թեկնածու, դոցենտ ԻՌԱ ԿՈՐՅՈՒՆԻ ՓԱՆՈՍՅԱՆ

Առաջատար կազմակերպություն՝ ՀՀ ԳԱԱ Մ. ՔՈԹԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Ատենախոսության հրապարակային պաշտպանությունը կայանալու է 2024 թվականի սեպտեմբերի 27-ին, ժամը՝ 13:30-ին Երևանի պետական համալսարանում (0025, ք. Երևան, Աբովյան փ. 52) գործող ՀՀ ԲԿԳԿ-ի Տնտեսագիտության 015 մասնագիտական խորհրդի նիստում:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Երևանի պետական համալսարանի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2024 թվականի հուլիսի 15-ին:

015 մասնագիտական խորհրդի  
գիտական քարտուղար՝  
տնտեսագիտության թեկնածու, դոցենտ

Հակոբջանյան Աննա Հովիկի  


## ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

**Հետազոտության թեմայի արդիականությունը:** Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության զարգացման ներկա փուլում ոլորտի առջև ծառայած բազմաթիվ հիմնախնդիրների մեջ իր կարևորությամբ առանձնանում է մրցունակության բարձրացումը: Վերջինիս ապահովումը պայմանավորված է բազմաթիվ գործոններով, որոնց շրջանակն ունի լայն ընդգրկում՝ այն ներառում է ինչպես բուն գյուղատնտեսության արտադրական գործընթացները, այնպես էլ դրանց հետ առնչվող հարաբերությունները, պարենամթերքների արտաքին և ներքին շուկայական իրավիճակը, տարբեր ենթակառուցվածքների առկայությունն ու դրանց գործունեության կատարելության մակարդակը: Հիշատակված գործոնների շրջանակը ներառում է նաև գյուղատնտեսության ոլորտը կարգավորող իրավաօրենսդրական դաշտը, համապատասխան պետական լծակները և կառուցակարգերը: Հետևաբար՝ գյուղատնտեսության մրցունակության բարձրացման հիմնախնդրի լուծման արդյունավետ լծակներից մեկը այդ բնագավառում պետական նպատակային քաղաքականության իրականացումն է:

Գյուղատնտեսության մրցունակության բարձրացման հիմնախնդիրների լուծումը կարևորվում է երկրի պարենային անվտանգության մակարդակի, արտադրության արդյունավետության բարձրացման, գյուղատնտեսական ծագման արտադրատեսակների արտաքին ապրանքաշրջանառության հաշվեկշռի բարելավման և գյուղատնտեսությունում տնտեսավարողների եկամուտների ավելացման առումով:

Հանրապետության գյուղատնտեսության մրցունակության մասին որոշակի պատկերացում են տալիս գյուղատնտեսության արտադրական գործընթացների մեքենայացման ցածր մակարդակը, գյուղատնտեսությունում չափազանց դանդաղ տեմպերով արդիական տեխնոլոգիաների ներդրումը, արտադրական գործընթացների գերազանցապես ավանդական մեթոդներով իրականացումը և այլն:

Արտադրողականությունը ճյուղի, տվյալ դեպքում՝ գյուղատնտեսության մրցունակությունը բնութագրող առանցքային ցուցանիշներից է: Չնայած հանրապետության գյուղատնտեսությունում զբաղվածության բարձր մակարդակին, ցածր է աշխատուժի օգտագործման արդյունավետությունը: Այսպես՝ 2022 թվականի տվյալներով գյուղատնտեսության համախառն արտադրանքը մեկ զբաղվածի հաշվով (ներառյալ ոչ ապրանքային արտադրանք արտադրողները) կազմել է՝ 2.8 մլն դրամ, իսկ արդյունաբերությունում այդ նույն ցուցանիշը տվյալ ժամանակահատվածում հաշվարկվել է՝ 18.2 մլն դրամ<sup>1</sup>: Ստեղծված իրավիճակում գյուղատնտեսությունում աշխատանքի արտադրողականության բարձրացման տեմպի արագացումը և դրա արդյունքում ոլորտի մրցունակության

---

<sup>1</sup> Հաշվարկները կատարվել են, հիմք ընդունելով՝ Հայաստանի վիճակագրական տարեգիրք, 2023, ՀՀ ՎԿ, Երևան 2023.- էջ 98; 310; 363

բարձրացումը օբյեկտիվ անհրաժեշտություն է: Սակայն միայն աշխատանքի արտադրողականության բարձրացման տեմպի արագացումը դեռևս բավարար չէ տնտեսության այլ ճյուղերի համեմատությամբ գյուղատնտեսության մրցունակության բարձրացման համար, հաշվի առնելով գյուղատնտեսության հիմնական ռեսուրսի՝ հողային ռեսուրսի օգտագործման ցածր արդյունավետությունը (վարելահողերի նպատակային օգտագործման մակարդակը 2022 թվականին կազմել է շուրջ՝ 48.0 %)², գյուղատնտեսական մշակաբույսերի սերմնաբուծության, մասնավորապես՝ առաջնային սերմնաբուծության, ինչպես նաև գյուղատնտեսական կենդանիների տոհմային գործի անբավարար կազմակերպումը և այս բնագավառում քաղաքականության դեռևս անկատարությունը, արդյունքում՝ գյուղատնտեսության հիմնական ճյուղերի՝ բուսաբուծության և անասնաբուծության կենսաբանական հնարավորությունների ոչ լիարժեք օգտագործումը, ոլորտի թույլ տեխնիկական զինվածությունը, նրանում արդիական տեխնոլոգիաների ներդրման ուղղությամբ էական դրական տեղաշարժերի, թվային գյուղատնտեսության բաղադրիչների անհրաժեշտ ծավալով կիրառման հնարավորությունների բացակայությունը, գյուղատնտեսության արտադրական և սպասարկող ենթակառուցվածքների անբավարար վիճակը, գյուղատնտեսական արտադրանքի պահեստավորման, փաթեթավորման, տարավորման, արտադրանքի իրացման անկատար օղակների առկայությունը (արդյունքում՝ գյուղատնտեսության ապրանքայնության միջին կշռված ցածր մակարդակը, որը 2022 թվականին կազմել է՝ 57.3%)³ և այլն:

Հաշվի առնելով վերը նշվածը, ՀՀ գյուղատնտեսության մրցունակության բարձրացումը, վերջինիս ուղղված քաղաքականության կատարելագործումը պահանջում է ընդգրկուն գիտական ուսումնասիրությունների իրականացում և դրանց հիման վրա հիմնավորված մոտեցումների և քայլերի առաջադրում: Վերջինս էլ պայմանավորում է ուսումնասիրվող թեմայի արդիականությունը:

**Հետազոտության նպատակն ու խնդիրները:** Ատենախոսության նպատակն է՝ ՀՀ գյուղատնտեսության մրցունակության բարձրացման քաղաքականության կատարելագործման հիմնախնդիրների բացահայտումն ու դրանց լուծման ուղիների առաջադրումը: Այդ նպատակի իրականացման համատեքստում ատենախոսության շրջանակներում նախանշվել են հետևյալ խնդիրները.

- ներկայացնել ճյուղի մրցունակության էությունը, այն պայմանավորող գործոնները, գնահատման չափանիշները, ցուցանիշները և մեթոդները,

² Հաշվարկները կատարվել են հիմք ընդունելով՝ Հայաստանի վիճակագրական տարեգիրք, 2023, ՀՀ ՎԿ, Երևան 2023.- էջ 362; 365

³ Գյուղատնտեսական արտադրանքի իրացումը (օգտագործումը) անհատական (գյուղացիական) տնային տնտեսությունների կողմից 2022 թվականին, ՀՀ ՎԿ, Երևան 2023.- էջ 4

- առաջադրել գյուղատնտեսության մրցունակության գնահատման ինտեգրալային ցուցանիշ և դրա հիման վրա գնահատել ՀՀ գյուղատնտեսության մրցունակության մակարդակը,
- հիմնավորել գյուղատնտեսության մրցունակության բարձրացման պետական քաղաքականության իրականացման հնարավորությունները,
- վերլուծել ՀՀ գյուղատնտեսության մրցունակությունը բնութագրող ցուցանիշների փոփոխության միտումները,
- ուսումնասիրել գյուղատնտեսության մրցունակության բարձրացման քաղաքականության միջազգային փորձը,
- գնահատել ՀՀ գյուղատնտեսության մրցունակության բարձրացման վրա ներկայիս պետական քաղաքականության ազդեցությունը,
- գնահատել գյուղատնտեսության մրցունակությունը պայմանավորող գործոնների քանակական ազդեցությունը,
- առաջադրել ՀՀ գյուղատնտեսության մրցունակության բարձրացման քաղաքականության կատարելագործման հիմնական ուղղությունները և գնահատել դրանց արդյունավետությունը:

**Ատենախոսության առարկան և օբյեկտը:** Ատենախոսության առարկան՝ ՀՀ գյուղատնտեսության մրցունակության բարձրացման քաղաքականության հիմնախնդիրներն են, դրանց լուծման հնարավորություններն ու կառուցակարգերը, իսկ օբյեկտը՝ ՀՀ գյուղատնտեսության ճյուղերն են, գյուղատնտեսությունում տնտեսավարող սուբյեկտները, ագրոպարենային ոլորտի պետական մարմինների կողմից վարվող քաղաքականությունը:

**Ատենախոսության տեսական, տեղեկատվական և մեթոդաբանական հիմքերը:** Ատենախոսությունում իրականացված հետազոտությունների համար տեսական հիմք են հանդիսացել հայրենական և արտերկրի ագրարային-տնտեսագետների աշխատությունները, գյուղատնտեսական արտադրության զարգացման և նրա մրցունակության բարձրացման պետական քաղաքականության կատարելագործման հիմնահարցերին նվիրված օրենսդրական և նորմատիվային ակտերը, ծրագրային և հայեցակարգային փաստաթղթերը:

Ատենախոսության համար տեղեկատվական հիմք են ծառայել ՀՀ վիճակագրական կոմիտեի հրապարակումները, ՀՀ էկոնոմիկայի նախարարության կողմից հրապարակված և այլ տեղեկատվական աղբյուրները:

Ատենախոսության մեջ կիրառվել են գիտական հետազոտության այնպիսի մեթոդներ, ինչպիսիք են՝ դիալեկտիկական, գիտական արստրակցիան, ինդուկցիան և դեդուկցիան, վիճակագրական և տնտեսագիտամաթեմաթիկական մեթոդները:

**Ատենախոսության գիտական նորույթը:** Ատենախոսության մեջ իրականացված վերլուծությունների և հետազոտությունների արդյունքներից գիտական նորույթ կարելի է համարել հետևյալները.

1. Առաջադրված գյուղատնտեսության մրցունակության ինտեգրալային ցուցանիշի հիման վրա գնահատվել է ՀՀ գյուղատնտեսության ներքին մրցունակության մակարդակը:
2. Բացահայտվել է ՀՀ գյուղատնտեսության մրցունակության մակարդակը բնութագրող առանձին արդյունքային հատկանիշների և ճյուղին բյուջետային հատկացումների միջև քանակական կապը:
3. Ռեգրեսիոն վերլուծության արդյունքում բացահայտվել է ՀՀ գյուղատնտեսության մրցունակությունը բնութագրող առանձին արդյունքային հատկանիշների վրա տարբեր գործոնների համատեղ ազդեցությունը (այդ թվում՝ դիտարկված գործոններից յուրաքանչյուրի ազդեցության չափը):
4. Առաջադրվել են ՀՀ գյուղատնտեսության մրցունակության բարձրացման քաղաքականության կատարելագործման հիմնախնդիրների լուծման ուղիները և գնահատվել առանձին ուղիների արդյունավետությունը:

**Ատենախոսության արդյունքների գործնական և կիրառական նշանակությունը:**

Թեկնածուական ատենախոսության շրջանակներում ստացված արդյունքները և դրանում ներկայացված առաջարկությունները կարող են օգտագործվել ՀՀ կառավարության, մասնավորապես՝ ՀՀ էկոնոմիկայի նախարարության և շահագրգիռ այլ պետական մարմինների կողմից՝ ոլորտի ռազմավարական, ծրագրային փաստաթղթերի մշակման, վարվող պետական քաղաքականության, կիրառվող պետական աջակցության ծրագրերի կատարելագործման գործընթացներում: Նշված արդյունքները կարող են օգտակար լինել տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից գյուղատնտեսության մրցունակության բարձրացմանն ուղղված նպատակային ծրագրերի, միջոցառումների և մոտեցումների մշակման, ինչպես նաև գյուղատնտեսությամբ զբաղվող տնտեսավարող սուբյեկտների, մասնավոր հատվածի ներդրողների, ագրոպարենային ոլորտի հետազոտողների համար:

**Ատենախոսության արդյունքների փորձարկումը և հրապարակումը:**

Ատենախոսության հիմնական դրույթները քննարկվել են Հայաստանի ազգային ագրարային համալսարանի «Ագրարային էկոնոմիկայի» և «Ագրոբիզնեսի կառավարման և քաղաքականության» ամբիոնների համատեղ նիստում, ինչպես նաև Երևանի պետական համալսարանի գիտական սեմինարում:

Ատենախոսության հիմնական դրույթներն ու նորույթները ամփոփված են հրատարակված 10 գիտական հոդվածներում:

**Ատենախոսության կառուցվածքը և ծավալը:** Ատենախոսությունը կազմված է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացություններից և առաջարկություններից, օգտագործած գրականության ցանկից, հավելվածներից: Շարադրված է 188 էջ ծավալով՝ առանց հավելվածների, պարունակում է 24 աղյուսակ, 9 գծապատկեր, 2 նկար և 19 հավելված:

## ԱՏԵՆԱԽՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

**Ներածությունում** հիմնավորված է թեմայի արդիականությունը, ձևակերպված են հետազոտության նպատակն ու խնդիրները, ներկայացված են հետազոտության առարկան և օբյեկտը, հիմնական արդյունքները և գիտական նորոյթը, դրանց գիտագործնական նշանակությունը:

Ատենախոսության առաջին՝ **«Գյուղատնտեսության մրցունակության տեսամեթոդաբանական հիմքերը»** գլխում քննության են առնվել ճյուղի մրցունակության էությունը և այն պայմանավորող գործոնները, գյուղատնտեսության մրցունակության գնահատման չափանիշները, ցուցանիշները և մեթոդները, գյուղատնտեսության մրցունակության բարձրացման պետական քաղաքականության իրականացման հնարավորությունները:

Մրցունակության և ճյուղի մրցունակության էության տնտեսագիտական գրականության մեջ առկա մեկնաբանությունների քննության արդյունքում աշխատանքում առաջարկվել են այդ եզրույթների սահմանումներ: Մրցունակության եզրույթի առաջարկվող սահմանումը հիմնված է դրա բոլոր կողմերի համալիր ներկայացման վրա, իսկ ճյուղի մրցունակության սահմանումը ներկայացվել է միջճյուղային մրցակցությունում նրա մրցակցելու կարողության, կայունության ու դինամիկության, այդ ճյուղի արտադրանքի սպառմամբ սպառողների պահանջմունքների բավարարվածության, միջազգային շուկայում դրա մրցակցային առավելությունների համատեքստում: Նշված սահմանումը վերաբերում է նաև գյուղատնտեսության մրցունակությանը:

Գյուղատնտեսության մրցունակության վերաբերյալ պատկերացումներն առավել ամբողջական կարող են լինել այն պայմանավորող գործոնները դիտարկելիս: Նշված գործոնների դիտարկման արդյունքում աշխատանքում առաջարկվել է դրանց դասակարգման բոլոր հատկանիշների համալիր ներկայացման վրա հիմնված մոտեցում, որում համադրվել են տնտեսագիտական գրականության մեջ տեղ գտած և առաջարկված հատկանիշները: Հետազոտության խնդիրներին համապատասխան գյուղատնտեսության մրցունակության վրա դրանց ազդեցության քանակական գնահատման առումով, այդ հատկանիշներից առավել կարևորվել են գործոնների ազդեցության քանակական գնահատման հնարավորությունը և աստիճանը:

Ճյուղի, այդ թվում՝ գյուղատնտեսության մրցունակության մասին կարելի է դատել ոչ միայն այն պայմանավորող գործոններից, այլև դրա մակարդակից ելնելով: Վերջինիս վերաբերյալ առավել հստակ և ամբողջական պատկերացում կարելի է կազմել դրա գնահատման տնտեսագիտական գրականության մեջ հայտնի ստորև նշված չափանիշների համալիր դիտարկմամբ, ինչպես նաև նշված մակարդակը բնութագրող առաջարկված ինտեգրալային ցուցանիշի գնահատմամբ: Խոսքը հետևյալ չափանիշների մասին է. արտադրանքի մրցունակությունը, ճյուղի կայունությունը, տնտեսության մեջ նրա մրցակցային

դիրքը, ռեսուրսային ապահովվածությունը, ներուժը, ճյուղում ռեսուրսների օգտագործման և կառավարման արդյունավետությունը, ճյուղի ներդրումային ակտիվությունն ու գրավչությունը, նորարարական ակտիվությունը, տեխնիկական զինվածությունը, արտադրության արտահանման կողմնորոշման և արտաքին տնտեսական գործունեության ազատականացման աստիճանը, ինքնաբավության և համակենտրոնացման մակարդակը:

Վերը նշված չափանիշների համալիր դիտարկումը մեթոդաբանական առումով կարևոր նշանակություն ունի գյուղատնտեսության մրցունակության մակարդակի գնահատման ամփոփ ցուցանիշի առաջադրման համար: Նշված ցուցանիշի առաջադրման գործում միաժամանակ կարևորվում է մաթեմատիկական մեթոդի դերը: Այն հնարավորություն է տվել միջին քառակուսայինի բանաձևի կիրառմամբ առաջադրել գյուղատնտեսության մրցունակության գնահատման ինտեգրալային ցուցանիշ (առաջադրված բանաձևի մաս է կազմել Հերֆինդալի ինդեքսի բանաձևը)<sup>4</sup>: Այդ ցուցանիշն առաջարկվում է որոշել հետևյալ բանաձևով.

$$Q_{H8t} = \sqrt{\frac{Q_{UU<U}^2 + Q_{UH}^2 + ՀՆԱ_{QS<F}^2 + Q<U_{SFS<}^2 + Q<U_{D<U}^2 + Q<U_{U<U}^2 + HUU_{UQ}^2 + Q<U_{UUU}^2}{8}} \quad (1)$$

որտեղ՝  
 $Q_{UU<U}$ -ն՝ գյուղատնտեսությունում ստեղծված ավելացված արժեքի մասնաբաժինն է գյուղատնտեսության համախառն արտադրանքի արժեքում (%),

$Q_{UH}$ -ն՝ գյուղատնտեսության արտադրողականության ինդեքսն է (%),

$ՀՆԱ_{QS<F}$ -ն՝ համախառն ներքին արդյունքի մեջ գյուղատնտեսության տեսակարար կշիռն է (%),

$Q<U_{SFS<}$ -ն՝ գյուղատնտեսության համախառն արտադրանքի արժեքի ինդեքսն է միավոր ցանքատարածությունների և բազմամյա տնկարկների հաշվով (%),

$Q<U_{D<U}$ -ն՝ գյուղատնտեսության վարկավորման ծավալի մասնաբաժինն է երկրի տնտեսության ընդհանուր վարկավորման մեջ (%),

$Q<U_{UUU}$ -ն՝ գյուղատնտեսության ապրանքայնության միջին կշռված մակարդակն է (%),

$HUU_{UQ}$ -ն՝ ՀՀ ազգային պարենային հաշվեկշռում ընդգրկված առաջնահերթ անհրաժեշտ պարենամթերքի ինքնաբավության միջին մակարդակն է էներգետիկ արժեքով գնահատված (%),

$Q<U_{UUU}$ -ն՝ գյուղատնտեսության համախառն արտադրանքի արժեքում արտահանվող գյուղատնտեսական արտադրանքի արժեքի մասնաբաժինն է (%):

<sup>4</sup> Տնտեսագիտության տեսություն (ուսումնական ձեռնարկ), խմբ.՝ տ.գ.դ., պրոֆ. Գ. Ե. Կիրակոսյանի և տ.գ.թ., պրոֆ. Ի. Ե. Խլիլայանի.-Եր., Տնտեսագետ, 2009.-էջ 318



Մրցունակության ինտեգրալային ցուցանիշը աշխատանքում հաշվարկվել է 2013-2022 թթ. կտրվածքով:

Տարբեր գործոններով պայմանավորված այդ ցուցանիշը ունեցել է տատանողական բնույթագիր: Նշված ցուցանիշի մեծությունը ամենաբարձր եղել է՝ 2017 թվականին (72.05 %), իսկ ամենացածրը՝ 2020 թվականին (63.60 %):

Աշխատանքում գնահատվել է նաև գյուղատնտեսության մրցունակության ինտեգրալային ցուցանիշի դիտարկված տարիների միջին մակարդակը՝  $\overline{F_{\text{հՅ}}}=67.67\%$ :

Գյուղատնտեսության մրցունակության գնահատման ինտեգրալային ցուցանիշը կարող է հաշվի առնվել կոնկրետ երկրում նրա մրցունակության արդի վիճակը վերլուծելիս, դրա բարելավման պետական քաղաքականության իրականացման հնարավորությունները հիմնավորելիս և դրանց ընդլայնմանն ուղղված մոտեցումներ առաջադրելիս: Նշված մոտեցումները վերաբերում են՝ ոլորտին ուղղակի պետական աջակցության շրջանակների ընդլայնմանը (մասնավորապես՝ գյուղատնտեսության մեջ օգտագործվող հիմնական ռեսուրսների և գյուղատնտեսական արտադրանք արտադրողների իրացման գների ինդեքսների տարբերության չափով սուբսիդավորմանը), տնտեսական լծակների օգտագործմամբ հողերի խոշորացման, գյուղատնտեսական կոոպերատիվների տարածման գործընթացի խթանմանը, կլաստերային, ագրարային ոլորտի գիտական նվաճումների առևտրայնացման քաղաքականության մշակմանը և ներդրմանը, գյուղատնտեսության արդյունաբերականացման մակարդակի բարձրացմանն ուղղված պետություն-մասնավոր հատված համագործակցությամբ ծրագրերի իրականացմանը:

Այդ մոտեցումների կիրառմամբ գյուղատնտեսության մրցունակության բարձրացման քաղաքականության իրականացման հնարավորությունների լիովին օգտագործումը հնարավոր չէ պատկերացնել առանց տվյալ երկրի, այդ թվում՝ մեր հանրապետության գյուղատնտեսության մրցունակության արդի վիճակը գնահատելու և նրա մրցունակության բարձրացման պետական քաղաքականության կատարելագործման հիմնախնդիրները բացահայտելու, որոնց նվիրված է ատենախոսության երկրորդ գլուխը:

Ատենախոսության երկրորդ՝ «**ՀՀ գյուղատնտեսության մրցունակության արդի վիճակը, դրա բարելավման քաղաքականության կատարելագործման հիմնախնդիրները**» գլխում տրվել է ՀՀ գյուղատնտեսության մրցունակությունը բնութագրող ցուցանիշների փոփոխության միտումների վերլուծությունը, ուսումնասիրվել է գյուղատնտեսության մրցունակության բարձրացման քաղաքականության միջազգային փորձը, գնահատվել է ՀՀ գյուղատնտեսության մրցունակության բարձրացման վրա ներկայիս պետական քաղաքականության ազդեցությունը, առաջադրվել են այդ քաղաքականության կատարելագործման հիմնախնդիրները:

«Հ գյուղատնտեսության մրցունակության արդի վիճակի մասին առավել ընդհանրական պատկերացում կարելի է կազմել տնտեսության մյուս ճյուղերի հետ համեմատության համատեքստում: Խոսքը՝ ՀՀ համախառն ներքին արդյունքի կառուցվածքում ճյուղի մասնաբաժնի մասին է, որը դիտարկված ժամանակահատվածում (2012-2022թթ.) անընդհատ նվազել է և դա ակնհայտ է աղյուսակ 1-ից:

Աղյուսակ 1

**Հայաստանի Հանրապետության ՀՆԱ-ի և դրանում գյուղատնտեսության մասնաբաժնի ցուցանիշները 2012-2022 թթ.<sup>5</sup>**

Տարիներ	Համախառն ներքին արդյունքը (մլրդ դրամ)	Այդ թվում՝ գյուղատնտեսությունում (մլրդ դրամ)	Գյուղատնտեսության տեսակարար կշիռը ընդհանուր ՀՆԱ-ի մեջ (%)	Հավելվածը կամ նվազումը նախորդ տարվա նկատմամբ (%)	
				Համախառն ներքին արդյունքը	Գյուղատնտեսությունում համախառն ներքին արդյունքը
2012	3997.6	764.0	19.1	5.8	-0.5
2013	4555.6	839.8	18.4	14.0	9.9
2014	4828.6	872.6	18.1	6.0	3.9
2015	5043.6	868.7	17.2	4.5	-0.4
2016	5079.9	809.7	15.9	0.7	-6.8
2017	5564.5	834.4	14.9	9.5	3.1
2018	6017.0	838.9	13.9	8.1	0.5
2019	6543.3	754.2	11.5	8.7	-10.1
2020	6181.9	701.6	11.3	-5.5	-7.0
2021	6982.9	791.7	11.3	13.0	12.8
2022	8496.8	880.6	10.4	21.7	11.2

Դիտարկված միտումը պայմանավորված է եղել հատկապես՝ ազգային տնտեսության մյուս ճյուղերի և ոլորտների (մասնավորապես՝ արդյունաբերություն, շինարարություն, առևտուր, սպասարկում) աճի համեմատաբար բարձր

<sup>5</sup> Պարենային ապահովություն և աղքատություն, 2013թ. հունվար-դեկտեմբեր, ՀՀ ԱՎԾ, Երևան 2014.-էջ 9: Պարենային ապահովություն և աղքատություն, 2017թ. հունվար-դեկտեմբեր, ՀՀ ԱՎԾ, Երևան 2018.-էջ 9: Պարենային ապահովություն և աղքատություն, 2021թ. հունվար-դեկտեմբեր, ՀՀ ՎԿ, Երևան 2022.-էջ 9: Պարենային ապահովություն և աղքատություն, 2022թ. հունվար-դեկտեմբեր, ՀՀ ՎԿ, Երևան 2023.-էջ 9

տեմպերով: Ուշագրավ է նաև, որ գյուղատնտեսությունում ՀՆԱ-ի հավելածի տեմպը վերը նշված որջ ժամանակահատվածում զգալիորեն ցածր է եղել երկրի ՀՆԱ-ի հավելածի տեմպից. երկրի ՀՆԱ-ն աճել է՝ 2.12 անգամ, իսկ գյուղատնտեսության դեպքում աճը կազմել է՝ 15.3 %:

Չնայած վերը նշված ժամանակահատվածում ՀՀ համախառն ներքին արդյունքի կառուցվածքում գյուղատնտեսության մասնաբաժնի անընդհատ նվազմանը, նրա արդի վիճակը և մրցունակությունը բնութագրող ցուցանիշների դինամիկան հիմնականում բնութագրվել է փոփոխական միտումներով և վկայում է նրա մրցունակության մակարդակի ոչ կայուն բարձրացման մասին: Խոսքը, վերաբերում է մասնավորապես՝ գյուղատնտեսության համախառն արտադրանքի դինամիկային և կառուցվածքին, արտադրության ծավալներին, ապրանքայնությանը, ինքնաբավությանը, գյուղատնտեսության համախառն արտադրանքի և նրա արտահանվող մասի փոփոխություններին, գյուղատնտեսական արտադրանք արտադրողների իրացման գներին: Նույնպիսի փոփոխական դինամիկա է նկատվել նաև համանման ներմուծվածի նկատմամբ տեղական արտադրության գյուղատնտեսական մթերքների աշխատանքում հաշվարկված մրցունակության գործակիցների դեպքում:

Վերը նշված փոփոխական դինամիկայի հետ մեկտեղ գյուղատնտեսության մրցունակության առումով մտահոգիչ են նաև տարբեր պատճառներով պայմանավորված ապրանքայնության միջին կշռված ցածր մակարդակը, (այն 2012-2022թթ. տատանվել է 56.1-58.6%-ի սահմաններում)<sup>6</sup>, վարելահողերի նպատակային օգտագործման անբավարար մակարդակը, ճյուղի թույլ տեխնիկական զինվածությունը և այլն:

ՀՀ գյուղատնտեսության մրցունակության արդի վիճակի վերլուծության համատեքստում միաժամանակ կարևորվել են և մշակվել մի շարք հիմնական գյուղատնտեսական մթերքների արտադրողից մինչև սպառողը արժեչրթաներ, որոնց դիտարկման արդյունքում առաջարկվել են նշված մթերքների մրցունակության բարձրացման հնարավորությունների առավելագույն օգտագործման մոտեցումներ: Վերջիններս իրենց կարևորությամբ հանդերձ, դեռևս բավարար չեն հանրապետության գյուղատնտեսության մրցունակության կայուն բարձրացման համար: Այդ նպատակին հասնելու գործում առանձնապես կարևորվում է գյուղատնտեսության մրցունակության բարձրացման քաղաքականության միջազգային փորձի ուսումնասիրումը: Նշվածով պայմանավորված առանձին զարգացած և զարգացող երկրների (ԱՄՆ-ի, Ճապոնիայի, Եվրամիության, Ֆրանսիայի, Դանիայի, Նիդերլանդների, Իսրայելի,

---

<sup>6</sup> Գյուղատնտեսական արտադրանքի իրացումը (օգտագործումը) անհատական (գյուղացիական) տնային տնտեսությունների կողմից 2015 թվականին, ՀՀ ԱՎԾ, Երևան 2016.- էջ 3: Գյուղատնտեսական արտադրանքի իրացումը (օգտագործումը) անհատական (գյուղացիական) տնային տնտեսությունների կողմից 2020; 2022 թվականներին, ՀՀ ՎԿ, Երևան, 2021; 2023.- էջ 4

Վրաստանի և Ռուսաստանի Դաշնության) փորձի ուսումնասիրության արդյունքում աստենախոսությունում առաջարկվել են մեր հանրապետությունում դրա տեղայնացման մոտեցումներ, որոնք վերաբերում են գյուղատնտեսությանը պետական աջակցության մի շարք ծրագրերին, մասնավորապես՝ «Ագրոարդյունաբերական կլաստերների ներդրման և զործունեության խթանման», «Գյուղատնտեսության ոլորտում նորարարությունների և թվային գյուղատնտեսության ներդրման» պետական օժանդակության ծրագրերին և այլն:

Գյուղատնտեսության մրցունակության բարձրացման պետական քաղաքականության միջազգային փորձի տեղայնացման հնարավորությունների առավել լրիվ օգտագործումը միաժամանակ պահանջում է գնահատել ՀՀ գյուղատնտեսության մրցունակության բարձրացման վրա ներկայիս պետական քաղաքականության ազդեցությունը և վեր հանել այդ քաղաքականության կատարելագործման հիմնախնդիրները: Այդ նպատակով որպես պետական քաղաքականության կրող աշխատանքում դիտարկվել է ՀՀ պետական բյուջեից գյուղատնտեսության ոլորտին հատկացումների քանակական ազդեցությունը ոլորտի մրցունակությունը պայմանավորող մի շարք ցուցանիշների վրա:

Հաշվարկների համար ելակետային տվյալները վերցվել են երկարատև ժամանակահատվածի՝ 16 տարվա (2007-2022թթ. կտրվածքով):

Գնահատվել է գյուղատնտեսությանը բյուջետային հատկացումների քանակական ազդեցությունը ճյուղի համախառն արտադրանքի արժեքի, արտադրանքի ծավալի ինդեքսի, արտադրողականության և ապրանքայնության մակարդակի վրա:

Համապատասխան հաշվարկների արդյունքներն ամփոփված են աղյուսակ 2-ում: Նշված արդյունքներից պարզորոշ երևում է, որ գյուղատնտեսությանը բյուջետային հատկացումները նշանակալի ազդեցություն են թողել գյուղատնտեսության համախառն արտադրանքի ավելացման ( $F=4.71$ ,  $sig.=0.048$ ) և արտադրողականության աճի ( $F=6.21$ ,  $sig.=0.026$ ) վրա: Գյուղատնտեսության արտադրանքի ծավալի ինդեքսի և ապրանքայնության մակարդակի վրա բյուջետային հատկացումները նշանակալի ազդեցություն չեն ունեցել:

Վերլուծության արդյունքները թույլ են տալիս եզրակացնել, որ չնայած 2007-2022 թթ. գյուղատնտեսությանը բյուջետային հատկացումները դրական ազդեցություն են ունեցել ճյուղի մրցունակության վրա, սակայն այդ ազդեցությունը թույլ է եղել:

**Գյուղատնտեսությանը բյուջետային հատկացումների և այլ արդյունքային հատկանիշների միջև կապը բնութագրող կոռելյացիայի և դետերմինացիայի գործակիցների հաշվարկի արդյունքները**

Ցուցանիշներ	Գյուղատնտեսության բյուջետային հատկացումների ազդեցությունը՝			
	Գյուղատնտեսության համախառն արտադրանքի արժեքի վրա	Գյուղատնտեսության արտադրանքի ծավալի ինդեքսի վրա	Գյուղատնտեսության արտադրողականության մակարդակի վրա	Գյուղատնտեսության ապրանքայնության մակարդակի վրա
<b>Կոռելյացիայի գործակից</b>	$r_{xy_1} = 0.502$	$r_{xy_2} = -0.187$	$r_{xy_3} = 0.554$	$r_{xy_4} = 0.445$
<b>Դետերմինացիայի գործակից</b>	$R^2 = 0.2518$	$R^2 = 0.0350$	$R^2 = 0.307$	$R^2 = 0.198$
<b>Ճշգրտված դետերմինացիայի գործակից</b>	$R^2_{adj.} = 0.1984$	$R^2_{adj.} = -0.0339$	$R^2_{adj.} = 0.258$	$R^2_{adj.} = 0.141$
<b>Ռեգրեսիոն մոդել</b>	$\widehat{y}_{1t} = 726.0 + 0.0036x_t$	$\widehat{y}_{2t} = 103.7 - 0.00015x_t$	$\widehat{y}_{3t} = 1658.5 + 0.036x_t$	$\widehat{y}_{4t} = 56.02 + 0.00004x_t$
<b>Ռեգրեսիոն մոդելի նշանակալիությունը <math>F</math> չափանիշով</b>	$F = 4.71$ $(sig.=0.048)$	$F = 0.51$ $(sig.=0.488)$	$F = 6.21$ $(sig.=0.026)$	$F = 3.46$ $(sig.=0.084)$

Նշված ազդեցության մեծացումը հնարավոր է դառնում գյուղատնտեսության մրցունակության բարձրացման քաղաքականության կատարելագործման աշխատանքում տարանջատված և համապատասխան հիմնավորումներով ներկայացված հետևյալ հիմնախնդիրների լուծման դեպքում.

- գյուղատնտեսության հիմնական ռեսուրսների (հողային և աշխատանքային) օգտագործման վիճակի բարելավման,
- գյուղատնտեսության հիմնական ճյուղերի՝ բուսաբուծության և անասնաբուծության կենսաբանական հնարավորությունների առավել օգտագործման,
- գյուղատնտեսության ոլորտի տեխնիկական զինվածության մակարդակի բարձրացման և նրանում արդիական տեխնոլոգիաների ներդրման,
- գյուղատնտեսական հումքի և մթերքի իրացման, ոլորտի արտադրական ու սպասարկող ենթակառուցվածքների բարելավման,
- գյուղատնտեսության ոլորտում տնտեսավարողների ֆինանսական կայունության ապահովման,
- գյուղատնտեսությունում իրականացվող պետական ծրագրերի բարելավման և նոր, արդյունավետ ծրագրերի գործարկման:

Նշված հիմնախնդիրների լուծման ուղիներն առաջադրելիս առանձնապես կարևորվում է գյուղատնտեսության մրցունակությունն առավելապես պայմանավորող գործոնների բացահատումը, ինչը հնարավոր է դառնում մրցունակությունը բնութագրող առանձին արդյունքային հատկանիշների վրա նրանց հետ վիճակագրական կապ ունեցող գործոնների ազդեցության քանակական գնահատման արդյունքում:

Ատենախոսության երրորդ՝ «**ՀՀ գյուղատնտեսության մրցունակության բարձրացման առաջարկվող քաղաքականության հիմնական ուղղությունները**» գլխում տրվել է ՀՀ գյուղատնտեսության մրցունակությունը պայմանավորող գործոնների ազդեցության քանակական գնահատականը, առաջադրվել են ՀՀ գյուղատնտեսության մրցունակության բարձրացման քաղաքականության կատարելագործման հիմնախնդիրների լուծման ուղիները, ինչպես նաև գնահատվել է ՀՀ գյուղատնտեսության մրցունակության բարձրացման առաջարկվող քաղաքականության հիմնական ուղղությունների արդյունավետությունը:

Տվյալ գլխի առաջին բաժնում 2000-2022 թթ. տվյալներով տարանջատված դիտարկվել է մրցունակությունը բնորոշող արդյունքային ցուցանիշի՝ գյուղատնտեսության արտադրողականության վրա տարբեր գործոնների (գյուղատնտեսության ապրանքայնության մակարդակի, գյուղատնտեսական ծառայությունների սակագների ինդեքսի, ԱՄՆ դոլարի միջին տարեկան փոխարժեքի) ազդեցությունը: Վերջինս գնահատվել է ռեգրեսիոն մոդելի կիրառմամբ:

Նշված բաժնում դիտարկվել է նաև 2000-2022 թթ. գյուղատնտեսության մրցունակությունը բնութագրող առանձին արդյունքային ցուցանիշների վրա մի շարք գործոնների համատեղ ազդեցությունը բազմաչափ գծային ռեգրեսիոն

մոդելի միջոցով: Խոսքը, ամենից առաջ, վերաբերում է գյուղատնտեսության մրցունակությունը բնութագրող արտադրողականության վրա գյուղատնտեսական մշակաբույսերի ցանքատարածությունների, բուսաբուծության համախառն արտադրանքի, անասնաբուծության համախառն արտադրանքի, գյուղատնտեսական ծառայությունների սակագների ինդեքսի ազդեցությանը:

«Ճ գյուղատնտեսության արտադրողականության մակարդակի վրա նշված գործոնների ազդեցության վերլուծության արդյունքները ներկայացված են աղյուսակ 3-ում:

Աղյուսակ 3

**2000-2022 թթ. «Ճ գյուղատնտեսության արտադրողականության բազմաչափ ռեգրեսիոն վերլուծության արդյունքները**

<b>Ցուցանիշներ</b>	<b>Արդյունքներ</b>
Բազմակի կոռելյացիայի գործակիցը	$R = 0.990$
Բազմակի դետերմինացիայի գործակիցը	$R^2 = 0.980$
Ճշգրտված դետերմինացիայի գործակիցը	$R^2_{adj.} = 0.976$
Ռեգրեսիոն մոդելը	$\hat{y}_t = -68.2 + 1.628x_{1t} + 1.162x_{2t} + 5.752x_{3t} - 8.579x_{4t}$
Ռեգրեսիայի գործակիցների նշանակալիությունը	$a_1(p - value = 0.127),$ $a_2(p - value = 0.007),$ $a_3(p - value = 0.000),$ $a_4(p - value = 0.211)$
Մոդելի նշանակալիությունը	$F = 223.4(signif. = 0.000)$

Կատարված վերլուծության արդյունքների համաձայն, ուսումնասիրվող ցուցանիշների միջև ձևավորվել է սերտ կապ ( $R = 0.990$ ), արտադրողականության մակարդակի տատանումների շուրջ 98 %-ը պայմանավորված է մոդելում ընդգրկված գործոնների համատեղ տատանումներով ( $R^2 = 0.980$ ) և ռեգրեսիոն վերլուծությունը կարելի է համարել նշանակալի:

Ըստ կառուցված վերջնական բազմաչափ ռեգրեսիոն մոդելի, 2000-2022 թթ. բուսաբուծության համախառն արտադրանքի ( $x_{2t}$ ) 1 մլրդ դրամով ավելացումը նպաստել է գյուղատնտեսության արտադրողականության ( $y_t$ ) 1.162 հազ. դրամ/մարդով ավելացմանը, իսկ անասնաբուծության համախառն արտադրանքի ( $x_{3t}$ ) 1 մլրդ դրամով ավելացման հետ զուգահեռ գյուղատնտեսության արտադրողականության մակարդակը բարձրացել է 5.752 հազ. դրամ/մարդով:

Աշխատանքում անդրադարձ է արվել նաև գյուղատնտեսության մրցունակությունը բնորոշող այնպիսի ցուցանիշների վրա տարբեր գործոնների քանակական ազդեցությանը, ինչպիսիք են՝ բերքատվությունը և մթերատվությունը:

Յորենի բերքատվության վրա դիտարկվել է հետևյալ գործոնների՝ ցորեն արտադրողների կողմից նախորդ տարում առաջարկված ցորենի մեկ կգ-ի գնի, համախառն բերքի, գյուղատնտեսական ծառայությունների սակագների ինդեքսի և ԱՄՆ դոլարի փոխարժեքի ազդեցությունը:

ՀՀ-ում ցորենի բերքատվության մակարդակի վրա նշված գործոնների ազդեցության ռեգրեսիոն վերլուծության արդյունքներն արտացոլված են աղյուսակ 4-ում:

Աղյուսակ 4

**2000-2022 թթ. ՀՀ-ում ցորենի բերքատվության մակարդակի բազմաչափ ռեգրեսիոն վերլուծության արդյունքները**

<b>Ցուցանիշներ</b>	<b>Արդյունքներ</b>
Բազմակի կոռելյացիայի գործակիցը	$R = 0.898$
Բազմակի դետերմինացիայի գործակիցը	$R^2 = 0.807$
Ճշգրտված դետերմինացիայի գործակիցը	$R^2_{adj.} = 0.764$
Ռեգրեսիոն մոդելը	$\hat{y}_t = 28.86 + 0.091x_{1t-1} + 0.043x_{2t} - 0.184x_{3t} - 0.013x_{4t}$
Ռեգրեսիայի գործակիցների նշանակալիությունը	$a_1(p - value = 0.002)$ , $a_2(p - value = 0.000)$ , $a_3(p - value = 0.181)$ , $a_4(p - value = 0.112)$
Մոդելի նշանակալիությունը	$F = 18.82(signif. = 0.000)$

Ռեգրեսիոն վերլուծության արդյունքների համաձայն ուսումնասիրվող ցուցանիշների միջև ձևավորվել է սերտ կապ ( $R = 0.898$ ), ցորենի բերքատվության մակարդակի տատանումների շուրջ 80.7%-ը պայմանավորված է մոդելում ընդգրկված գործոնների համատեղ տատանումներով ( $R^2 = 0.807$ ) և ռեգրեսիոն վերլուծությունը կարելի է համարել նշանակալի:

Ըստ կառուցված վերջնական բազմաչափ ռեգրեսիոն մոդելի, 2000-2022 թթ. ցորեն արտադրողների կողմից նախորդ տարում առաջարկված ցորենի մեկ կգ-ի գնի ( $x_{1t-1}$ ) մեկ դրամով ավելացումը նպաստել է տվյալ տարում ցորենի բերքատվության մակարդակի ( $y_t$ ) 0.091 գ/հա-ով, ցորենի համախառն բերքի ( $x_{2t}$ ) հազար տոննայով ավելացումը՝ նշված մակարդակի 0.043 գ/հա-ով ավելացմանը:

Աշխատանքի շրջանակներում քանակապես գնահատվել է անասնաբուծության մրցունակությունը բնորոշող կարևորագույն ցուցանիշի՝ կովերի միջին տարեկան կաթնատվության ( $y_t$ ) վրա ազդող գործոնների ներգործությունը:



Ռեգրեսիոն վերլուծության արդյունքների համաձայն 2000-2022 թթ. ՀՀ-ում մեկ կոպի միջին տարեկան կաթնատվության մակարդակի ( $y_t$ ) և դրա վրա ազդող դիտարկված գործոնների՝ կաթ արտադրողների մեկ լիտրի իրացման միջին տարեկան գնի ( $x_{1t}$ ), անասունների պատվաստումների սակագների ինդեքսի ( $x_{2t}$ ), գյուղատնտեսական ծառայությունների սակագների ինդեքսի ( $x_{3t}$ ) միջև ձևավորվել է սերտ կապ ( $R = 0.859$ ): 2000-2022 թթ. ՀՀ-ում մեկ կոպի միջին տարեկան կաթնատվության մակարդակի տատանումների շուրջ 73.8%-ը պայմանավորված է մոդելում ընդգրկված գործոնների համատեղ տատանումներով ( $R^2=0.738$ ): Կատարված ռեգրեսիոն վերլուծությունը կարելի է համարել նշանակալի ( $F = 17.8$  (*signif.* = 0.000)):

Ըստ կառուցված վերջնական բազմաչափ ռեգրեսիոն մոդելի ( $\hat{y}_t = 2190.2 + 7.709x_{1t} - 1.713x_{2t} - 9.115x_{3t}$ ), 2000-2022 թթ. կաթ արտադրողների մեկ լիտրի իրացման միջին տարեկան գնի մեկ դրամով ավելացման հետ զուգահեռ կոպերի միջին տարեկան կաթնատվության մակարդակը բարձրացել է 7.709 կգ-ով:

ՀՀ գյուղատնտեսության մրցունակությունը պայմանավորող վերը նշված գործոնների ազդեցության քանակական գնահատման արդյունքները հիմնականում հաշվի են առնվել ոլորտի մրցունակության բարձրացման քաղաքականության կատարելագործման առանձին հիմնախնդիրների լուծման ուղիները մշակելիս: Խոսքը վերաբերում է ստորև հակիրճ ներկայացված գյուղատնտեսության մրցունակության բարձրացման քաղաքականության կատարելագործման հետևյալ հիմնախնդիրների լուծման ուղիներին:


**Գյուղատնտեսության հիմնական ռեսուրսների օգտագործման վիճակի բարելավման հիմնախնդրի** լուծման առաջարկությունները վերաբերում են, ամենից առաջ, գյուղատնտեսական նշանակության հողերի օգտագործման ցածր արդյունավետության, վարելահողերի մի մասի չօգտագործման պատճառների մեղմմանը: Մյուս առաջարկությունները վերաբերում են աշխատանքային ռեսուրսների օգտագործման արդյունավետության բարձրացմանը և ուղղված են ոչ գյուղատնտեսական գործունեության ընդլայնմանը, գյուղատնտեսությունում սեզոնայնության մեղմմանը և գյուղացիական տնտեսություններում գյուղատնտեսական մթերքների վերամշակման հնարավորությունների ստեղծմանը, ինչպես նաև գյուղատնտեսության ոլորտում կադրային քաղաքականության կատարելագործմանը:

**Գյուղատնտեսության հիմնական ճյուղերի՝ բուսաբուծության և անասնաբուծության կենսաբանական հնարավորությունների առավել օգտագործման հիմնախնդրի** լուծման առաջարկվող մոտեցումներից հատկանշական են՝ հանրապետությունում սերմնաբուծությամբ զբաղվող գիտական կազմակերպություններում բարձր վերարտադրության սերմերի՝ սուպեր էլիտային և էլիտային սերմերի արտադրության և վերարտադրության կազմակերպումը, դրանում նաև մասնագիտացված կազմակերպությունների և գյուղացիական տնտեսությունների ընդգրկմամբ, միջնաժամկետ հեռանկարում

բարձրորակ և կոնդիցիոն սերմերի տեսակարար կշռի ավելացումը (հասցնելով օգտագործվող սերմերի քանակում 70-75%-ի), բարձր վերարտադրության սերմերի գնի սուբսիդավորման մեխանիզմների կիրառումը (սահմանելով սերմի գնի առնվազն 50 %-ի սուբսիդավորում), պետական և մասնավոր կառույցների կողմից բարձր վերարտադրության սերմերի վերարտադրության բնագավառում իրականացվող ծրագրերի ծավալների ընդլայնումը:

Անասնաբուծության ճյուղի կենսաբանական հնարավորությունների առավել օգտագործման ուղղությամբ առաջարկներն ուղղվել են՝ կենդանիների մթերատու և տոհմային հատկանիշների, հոտի կառուցվածքի, կենդանիների պահվածքի և կերակրման պայմանների բարելավմանը, պետական ծրագրերով տավարաբուծությունում և մանր եղջերավոր անասնաբուծությունում տոհմային անասնազվաքանակի ձեռք բերման ծավալների ավելացմանը, մատչելի վարկավորումից բացի աջակցության որոշակի կայուն մասի սահմանմանը (տոհմային կենդանիների արժեքի առնվազն 45-50%-ի չափով), արհեստական սերմնավորման գործընթացի կազմակերպմանը, հանրապետության համար հեռանկարային համարվող սաղմերի փոխպատվաստման մեթոդի կիրառմանը, պետական ծրագրերում աջակցության մեխանիզմների կատարելագործմանն ու դրանց վերահսկողության մեխանիզմների ներդրմանը, պետական կառավարման մարմնի կառուցվածքում առանձին անասնապահական ծրագրերի համակարգման միավորի ստեղծմանը:

**Գյուղատնտեսության ոլորտի տեխնիկական զինվածության մակարդակի բարձրացման և նրանում արդիական տեխնոլոգիաների ներդրման հիմնախնդրի** լուծման առաջարկվող մոտեցումները վերաբերում են՝ գյուղատնտեսական տեխնիկայի լիզինգի մատչելի մեխանիզմների ներդրմանը, մասնավորապես՝ լիզինգի կանխավճարի նվազեցմանը, համայնքային ծրագրերի շրջանակներում տեղական ինքնակառավարման մարմիններին կից մեքենա-տրակտորային հավաքակալանների ստեղծմանը, թվային գյուղատնտեսության սարքավորումների հանրապետություն ներմուծման պետական ծրագրերի իրականացմանը, մարզերի, տարածաշրջանների կամ համայնքային կտրվածքով նշված գյուղատնտեսական ծառայությունների մատուցման առանձին կազմակերպական միավորի ձևավորմանը: Աշխատանքում տրվել է թվային գյուղատնտեսության սարքավորումների օգտագործման կազմակերպական կառուցվածքի սխեման (գծապատկեր):



**Գծապատկեր: ՀՀ-ում թվային գյուղատնտեսության սարքավորումներ օգտագործող կառույցի կազմակերպական կառուցվածքը**

Գյուղատնտեսական հումքի և մթերքի իրացման, ոլորտի արտադրական ու սպասարկող ենթակառուցվածքների բարելավման հիմնախնդրի լուծման առաջարկվող մոտեցումներից հատկանշական են՝ դրանց իրացման համալիր ենթակառուցվածքի ստեղծումը, գյուղական բնակավայրերում արտադրատեխնիկական սպասարկման և մատակարարման կառույցների ձևավորումը՝ պետություն-մասնավոր հատված համագործակցությամբ որոշակի աջակցության ծրագրի հենքի վրա: Աշխատանքում առաջարկվել է գյուղատնտեսական մթերքների և հումքի իրացման ենթակառուցվածքի կազմակերպական կառուցվածքի սխեման:

Գյուղատնտեսության ոլորտում տնտեսավարողների ֆինանսական կայունության ապահովման հիմնախնդրի լուծման առաջարկվող մոտեցումներն են՝ գյուղատնտեսական վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման ծրագրի վերսկսումը՝ վարկավորվող ենթաճյուղերից կախված մայր գումարի և մարման ժամկետների հնարավոր վերանայմամբ, այդ ծրագրի պատշաճ մոնիտորինգի և վերահսկողության իրականացման մեխանիզմների կիրառումը, վարկավորվող տնտեսավարողներին ֆինանսական ռեսուրսների նպատակային կիրառմանն ուղղված խորհրդատվության մատուցումը, միավոր հեկտար ցանքատարածությունների հաշվով, հացահատիկային և ու հատիկաընդեղեն մշակաբույսերի և ցանովի կերային մշակաբույսերի մշակության սուբսիդավորումը:

Գյուղատնտեսությունում իրականացվող պետական ծրագրերի բարելավման և նոր, արդյունավետ ծրագրերի գործարկման քաղաքականության հիմնախնդրի լուծման առաջարկվող մոտեցումներից հատկանշական են՝ գյուղատնտեսության պետական աջակցության գրեթե բոլոր ծրագրերի նախատեսված ծավալներով իրականացման նպատակով աջակցության բաղադրիչի ընդլայնումն ու ծրագրերի վերահսկողության մեխանիզմների բարելավումը:

Պետական աջակցության ծրագրերի առաջարկվող վերանայումը և ընդլայնումը պահանջում են բյուջետային ներդրումների էական ավելացում,

սակայն մեր դիտարկումները հիմք են տալիս ենթադրելու, որ դրանք էականորեն կփոխհատուցվեն արտադրության ծավալների ավելացման և ոլորտի մրցունակության բարձրացման ու արտադրության պայմանների բարելավման արդյունքում:

Աշխատանքի տվյալ գլխի եզրակակիչ բաժնում առաջադրված գյուղատնտեսության մրցունակության բարձրացման քաղաքականության կատարելագործման առանձին կարևորագույն ուղղությունների համար, կոնկրետ հաշվարկներով հիմնավորվել է դրանց ներդրման արդյունավետությունը:

**«Եզրակացություններ»** բաժնում ամփոփվել են հետազոտության կարևորագույն արդյունքները և արվել են առաջարկություններ, որոնցից հիմնականներն են.

1. Ճյուղի, այդ թվում՝ գյուղատնտեսության մրցունակությունը հանդես է գալիս որպես դրա յուրահատկությունը, զարգացմանը նպաստող գործոններն ու պայմաններն արտացոլող բնութագրական կողմերի այնպիսի համադրում, որն ապահովում է նրա մրցակցելու կարողությունը միջճյուղային մրցակցությունում, կայունությունն ու դինամիկությունը, այդ ճյուղի արտադրանքի սպառմամբ սպառողների պահանջմունքների բավարարվածությունն ու միջազգային շուկայում դրա մրցակցային առավելությունները:

2. Գյուղատնտեսության մրցունակության մակարդակի վերաբերյալ առավել հստակ և ամբողջական պատկերացում կարելի է կազմել դրա չափանիշների և համապատասխան ցուցանիշների համալիր դիտարկմամբ, նշված մակարդակը բնութագրող ամփոփ ցուցանիշի գնահատմամբ:

3. Ճյուղի մրցունակության չափանիշների մեջ հիմնականը՝ նրա արտադրանքի մրցունակությունն է, որը, վերջին հաշվով, արտացոլում է սպառողների կողմից դրա պահանջված լինելը՝ բավարարված պահանջարկի ձևով: Այս դեպքում նշված արտադրանքի մրցունակությունը բնութագրող հիմնական ցուցանիշ կարող է հանդիսանալ տվյալ ժամանակահատվածում ճյուղի արտադրանքի առաջարկի ֆիզիկական ընդհանուր ծավալում իրացված արտադրանքի տեսակարար կշիռը:

4. Տնտեսության այլ ճյուղերի և ոլորտների կողմից առաջարկվող ապրանքների և ծառայությունների մրցունակության հետ համեմատության արդյունքում տվյալ ճյուղի արտադրանքի մրցունակության ընդհանրական ցուցանիշ կարող է ծառայել ուսումնասիրվող ժամանակահատվածում այդ ճյուղի արտադրանքի իրացման ընդհանուր ծավալի աճի կամ նվազման տեմպը (համադրելի գներով արտահայտված) այլ ճյուղերի և ոլորտների համեմատությամբ:

5. Գյուղատնտեսության ներքին մրցունակության մակարդակը կարող է գնահատվել առաջարկված միջին քառակուսայինի բանաձևով հաշվարկվող ինտեգրալային ցուցանիշով: Նշված ցուցանիշը և դրա հաշվարկման առաջարկվող մոտեցումը գործնական կիրառման համար մատչելի է ինչպես առանձին տարիների, այնպես էլ որոշակի ժամանակահատվածի կտրվածքով

գյուղատնտեսության մրցունակության մակարդակի և դրա փոփոխության միտումների գնահատման համար:

6. Գյուղատնտեսության մրցունակության բարձրացման պետական քաղաքականության իրականացման հնարավորությունների ընդլայնման աշխատանքում առաջարկվող մոտեցումները վերաբերում են՝ ոլորտին ուղղակի պետական աջակցության շրջանակների ընդլայնմանը (մասնավորապես՝ գյուղատնտեսության մեջ օգտագործվող հիմնական ռեսուրսների և գյուղատնտեսական արտադրանք արտադրողների իրացման գների ինդեքսների տարբերության չափով սուբսիդավորմանը), տնտեսական լծակների օգտագործմամբ հողերի խոշորացման, գյուղատնտեսական կոոպերատիվների տարածման գործընթացի խթանմանը, կլաստերային, ագրարային ոլորտի գիտական նվաճումների առևտրայնացման քաղաքականության մշակմանը և ներդրմանը, գյուղատնտեսության արդյունաբերականացման մակարդակի բարձրացմանը՝ պետություն-մասնավոր հատված համագործակցության շրջանակներում:

7. ՀՀ գյուղատնտեսության վիճակը և նրա մրցունակությունը բնութագրող ցուցանիշները 2012-2022թթ. բնութագրվել են տարաբնույթ գործոնների ազդեցությամբ պայմանավորված փոփոխական միտումներով, ինչը վկայում է մրցունակության մակարդակի ոչ կայուն բարձրացման մասին: Այդ հիմնականում վերաբերում է գյուղատնտեսության համախառն արտադրանքի դինամիկային և կառուցվածքին, արտադրության ծավալներին, գյուղատնտեսական մթերքներով հանրապետության ինքնաբավությանը, դրանց ապրանքայնության մակարդակներին և այլն:

8. Գյուղատնտեսության մրցունակության համատեքստում քննության առնվող գյուղատնտեսական մթերքների արտադրության, դրա ապրանքայնության, նշված մթերքների արտահանման և ներմուծման, ինքնաբավության, դրանց գների, շահութաբերության մակարդակի վերաբերյալ առավել ամբողջական պատկերացում կարելի է կազմել գյուղատնտեսական մթերքների աշխատանքում մշակված արժեշտայնությունը դիտարկելիս, ինչը թույլ է տալիս բացահայտել դրանց մրցունակության բարձրացման հնարավորությունները:

9. Երկարատև ժամանակահատվածի (16 տարիների) կտրվածքով գյուղատնտեսությանը բյուջետային հատկացումների և նրա մրցունակությունն արտացոլող մի շարք արդյունքային հատկանիշների՝ գյուղատնտեսության համախառն արտադրանքի արժեքի, արտադրանքի ծավալի ինդեքսի, արտադրողականության և ապրանքայնության մակարդակի միջև կապը բնութագրող էկոնոմետրիկ հաշվարկների արդյունքներից կարելի է եզրակացնել, որ գյուղատնտեսության ոլորտում վարվող քաղաքականությունը դրսևորված բյուջետային հատկացումներով դրական ազդեցություն է ունեցել ճյուղի մրցունակության վրա, սակայն այդ ազդեցությունը թույլ է:

10. Գյուղատնտեսության մրցունակությունը բնորոշող արդյունքային հատկանիշի՝ արտադրողականության վրա տարբեր գործոնների (գյուղատնտեսության ապրանքայնության մակարդակի, գյուղատնտեսական ծառայությունների սակագների ինդեքսի, ԱՄՆ դոլարի միջին տարեկան փոխարժեքի) տարանջատված ազդեցության քանակական գնահատման արդյունքները թույլ են տալիս եզրակացնել, որ արտադրողականության մակարդակի տատանումները դիտարկված ժամանակահատվածում առավելապես պայմանավորված են ԱՄՆ դոլարի միջին տարեկան փոխարժեքով և ճյուղի ապրանքայնության մակարդակով, իսկ ամենից քիչ չափով՝ գյուղատնտեսական ծառայությունների սակագների ինդեքսի տատանումներով:

11. ՀՀ գյուղատնտեսության արտադրողականության բազմաչափ ռեգրեսիոն վերլուծության արդյունքները թույլ են տալիս եզրակացնել, որ դիտարկված ժամանակահատվածում արտադրողականության վրա նշանակալի ազդեցություն են ունեցել բուսաբուծության և անասնաբուծության համախառն արտադրանքը: Ըստ կառուցված վերջնական բազմաչափ ռեգրեսիոն մոդելի, բուսաբուծության համախառն արտադրանքի 1 մլրդ դրամով ավելացումը նպաստել է գյուղատնտեսության արտադրողականության 1.162 հազ. դրամ/մարդով ավելացմանը, իսկ անասնաբուծության համախառն արտադրանքի 1 մլրդ դրամով ավելացման հետ զուգահեռ գյուղատնտեսության արտադրողականության մակարդակը բարձրացել է 5.752 հազ. դրամ/մարդով:

12. Ցորենի բերքատվության բազմաչափ ռեգրեսիոն վերլուծության արդյունքները թույլ են տալիս եզրակացնել, որ դիտարկված ժամանակահատվածում բերքատվության վրա նշանակալի ազդեցություն են ունեցել ցորեն արտադրողների կողմից նախորդ տարում առաջարկված ցորենի մեկ կգ-ի գինը և ցորենի համախառն բերքը: Ըստ կառուցված վերջնական բազմաչափ ռեգրեսիոն մոդելի, այդ գնի մեկ դրամով ավելացումը նպաստել է տվյալ տարում ցորենի բերքատվության մակարդակի 0.091 գ/հա-ով, ցորենի համախառն բերքի հազար տոննայով ավելացումը՝ նշված մակարդակի 0.043 գ/հա-ով ավելացմանը:

13. Կովերի միջին տարեկան կաթնատվության բազմաչափ ռեգրեսիոն վերլուծության արդյունքները թույլ են տալիս եզրակացնել, որ դիտարկված ժամանակահատվածում կաթնատվության վրա նշանակալի ազդեցություն է ունեցել կաթ արտադրողների մեկ լիտրի իրացման միջին տարեկան գինը: Ըստ կառուցված վերջնական բազմաչափ ռեգրեսիոն մոդելի, դիտարկված ժամանակահատվածում այդ գնի մեկ դրամով ավելացման հետ զուգահեռ կովերի միջին տարեկան կաթնատվության մակարդակը բարձրացել է 7.709 կգ-ով:

14. Աշխատանքում գյուղատնտեսության մրցունակության բարձրացման պետական քաղաքականության կատարելագործման առաջադրված վեց հիմնախնդիրների (գյուղատնտեսության հիմնական ռեսուրսների օգտագործման վիճակի բարելավման, բուսաբուծության և անասնաբուծության կենսաբանական հնարավորությունների առավել օգտագործման,

գյուղատնտեսության ոլորտի տեխնիկական զինվածության մակարդակի բարձրացման և նրանում արդիական տեխնոլոգիաների ներդրման, գյուղատնտեսական հումքի և մթերքի իրացման, ոլորտի արտադրական ու սպասարկող ենթակառուցվածքների բարելավման, գյուղատնտեսության ոլորտում տնտեսավարողների ֆինանսական կայունության ապահովման, գյուղատնտեսությունում իրականացվող պետական ծրագրերի բարելավման և նոր, արդյունավետ ծրագրերի գործարկման քաղաքականության) լուծմանն ուղղված առաջարկությունները կարող են կիրառվել պետական կառավարման մարմինների կողմից ոլորտի մրցունակության բարձրացման քաղաքականության հստակեցման նպատակով, ինչպես նաև տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից իրականացվող ծրագրերում:

15. ՀՀ գյուղատնտեսության մրցունակության բարձրացման առաջարկվող քաղաքականության հիմնական ուղղությունների արդյունավետության գնահատման ուղղությամբ կատարված հաշվարկների հիմնական արդյունքներն են.

- Կաթիլային ոռոգման համակարգի ներդրման արդյունքում զուտ եկամտի աճն ըստ հաշվարկների (1 հա-ի հաշվով) կազմել է 1.7 մլն դրամ, այսինքն՝ հնարավորություն կտա կաթիլային ոռոգման համակարգի ներդրման ծախսերն ամբողջությամբ փոխհատուցել համակարգի ներդրման առաջին տարում:
- Աշնանացան ցորենի ցանքատարածությունների սուբսիդավորման ծրագիրը հավելյալ բերքից բացի կապահովի այլ արդյունքներ, մասնավորապես՝ նպատակային օգտագործվող վարելահողերի տարածքը կավելանա՝ չափավոր տարբերակի դեպքում՝ 10.2, իսկ միջին տարբերակի դեպքում՝ 14.0 հազ. հա-ով: Ցորենի ինքնաբավության մակարդակը չափավոր և միջին տարբերակների դեպքում կբարձրանա, համապատասխանաբար՝ 5.6 և 7.6 տոկոսային կետով:
- Արտադրող և վերամշակող ընկերություններին իրացված կաթի յուրաքանչյուր կիլոգրամի հաշվով սուբսիդավորման մեխանիզմի կիրառմանն ուղղված ծրագրի մեջ ընդգրկված տնտեսություններում կաթի ապրանքայնության մակարդակը կբարձրանա՝ 4.14 տոկոսային կետով, ֆիզիկական ծավալով ապրանքային կաթը կավելանա՝ 4.0 հազ. տոննայով: Սպասվող ապրանքային արտադրանքի արժեքը սուբսիդավորված գներով 6852.9 մլն դրամով գերազանցում է ծրագիրը չիրականացվելու դեպքում ստացվող հասույթին (եկամտին): Ծրագրի կարևորագույն արդյունքներից կլինի կաթ արտադրողների և վերամշակողների հետ պայմանագրային հարաբերությունների զարգացումը, արտադրության կազմակերպման որակական բարելավման և արտադրության ծավալների ավելացման համար պայմանների ստեղծումը, պարենային անվտանգության և մրցունակության մակարդակի բարձրացումը:

- Կատարված հաշվարկները ցույց են տալիս, որ գյուղատնտեսական մշակաբույսերի DJI Agras T 50 դրոններով (հաշվի առնելով դրանց համեմատական մեծ առավելությունները) սրկման դեպքում արտադրողականությունից, սրկման որակից բացի ապահովվում է մեծ տնտեսում թունաքիմիկատների խնայողության հաշվին: Կատարված հաշվարկները ցույց են տալիս, որ դրոնով սրկման դեպքում ավանդական սրկման համեմատ դրոնի ձեռք բերման ծախսերը կարող են փոխհատուցվել շուրջ 122 հա սրկումից հետո:
- Հաշվարկները վկայում են, որ որոշակի գյուղատնտեսական հողատարածքի հաշվով (250 հա) եղանակային կայանի (IMETOS 3.3) ներդրման արդյունքում հավելյալ եկամուտը տարվա կտրվածքով կազմում է՝ 187.4 մլն դրամ, իսկ ներդրման ծախսերը փոխհատուցվում են՝ բազմակի անգամ: Վերջինս վկայում է եղանակային կայանների ներդրման բարձր արդյունավետության մասին:  
Վերը նշված և աշխատանքում տեղ գտած այլ առաջարկությունների կիրառումը հանրապետության գյուղատնտեսության պետական քաղաքականության շրջանակներում, էական նշանակություն կունենա ոլորտի մրցունակության բարձրացման գործընթացում:  
Ատենախոսության հիմնական արդյունքներն արտացոլված են հեղինակի հետևյալ հրապարակումներում.

1. Ծպնեցյան Լ. Հ., Գյուղատնտեսության մրցունակությունը պայմանավորող գործոնների դասակարգման հատկանիշները և դրա գնահատման չափանիշների կատարելագործման մոտեցումները, Գիտական Արցախ, №1(12), Երևան, 2022.- էջ 251-270
2. Ծպնեցյան Լ. Հ., Գյուղատնտեսության մրցունակության բարձրացման պետական քաղաքականության կատարելագործման հնարավորությունները, Գիտական Արցախ, №2(13), Երևան, 2022.- էջ 207-223
3. Ծպնեցյան Լ. Հ., Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության մրցունակությունը պայմանավորող գործոնների ազդեցության քանակական գնահատումը, Գիտական Արցախ, №3(14), Երևան 2022.- էջ 223-231
4. Восканян А. Е., Цпнецян Л. А., Анализ современного состояния сельского хозяйства Республики Армения и характеристика его конкурентоспособности. Вызовы и современные ответы на проблемы устойчивого развития сельских территорий: Сборник статей по материалам Международного научно-практического форума, Краснодар, КубГАУ 2022.- с. 46-58
5. Voskanyan A. E., Tspnetsyan L. H., Quantitative assessment of the impact of state policy on competitiveness of agriculture in the republic of Armenia, Alternative, N1, January - March, Armenia, Yerevan 2023.- p. 18-24
6. Ghazaryan E. S., Tspnetsyan L. H., The international experience of the state policy of raising the competitiveness of agriculture and the possibilities to



- localize it in the republic of Armenia, Alternative, N1, January-March, Armenia, Yerevan 2023.-p. 117-126
7. Voskanyan A. E., Tspnetsyan L. H., Value chains of basic agricultural products in the republic of Armenia and opportunities for increasing competitiveness, Alternative, N2, April-June, Armenia, Yerevan 2023.- p. 34-46
  8. Ghazaryan E. S., Tspnetsyan L. H., Quantitative characteristics of the impact of various factors on some indicators characterizing the competitiveness of agriculture in RA, Alternative, N2, April-June, Armenia, Yerevan 2023.-p. 194-205
  9. Voskanyan A. E., Tspnetsyan L. H., Efficiency assessment for the main directions of proposed state policy to increase the competitiveness of agriculture in the Republic of Armenia, Alternative, N3, July-September, Armenia, Yerevan 2023.- p. 27-42
  10. Tspnetsyan L. H., The prospects of solving the issues of the state policy on increasing the competitiveness of agriculture in the republic of Armenia, Alternative, N3, July -September, Armenia, Yerevan 2023.- p.97-116

**ОСНОВНЫЕ НАПРАВЛЕНИЯ СОВЕРШЕНСТВОВАНИЯ ПОЛИТИКИ  
ПОВЫШЕНИЯ КОНКУРЕНТОСПОСОБНОСТИ СЕЛЬСКОГО ХОЗЯЙСТВА РА**

Диссертация представлена на соискание ученой степени кандидата экономических наук по специальности 08.00.02- "Экономика и управление народным хозяйством и его отраслями".

Защита диссертации состоится 27-го сентября 2024 года в 13<sup>30</sup> на заседании специализированного совета по экономике 015 Комитета высшего образования и науки Республики Армения, действующего в Ереванском государственном университете, по адресу: г. Ереван, 0025, ул. Х. Абовяна 52.

**РЕЗЮМЕ**

На нынешнем этапе развития сельского хозяйства Республики Армения среди многочисленных проблем, стоящих перед отраслью, своей значимостью выделяется повышение конкурентоспособности. Обеспечение последней обусловлено многочисленными факторами, рамки которых широки: они включают в себя как производственные процессы самого сельского хозяйства, так и связанные с ними отношения, внешнюю и внутреннюю рыночную конъюнктуру продовольствия, наличие различных инфраструктур и уровня совершенства их деятельности. Рамки упомянутых факторов также включают в себя законодательно-правовое поле, регулирующее сферу сельского хозяйства, соответствующие государственные рычаги и механизмы. Следовательно, одним из эффективных рычагов решения проблемы повышения конкурентоспособности сельского хозяйства является реализация целенаправленной государственной политики в этой сфере.

Решение проблем повышения конкурентоспособности сельского хозяйства важно с точки зрения повышения уровня продовольственной безопасности страны, эффективности производства, улучшения баланса внешней торговли продукцией сельскохозяйственного происхождения и увеличения доходов хозяйствующих субъектов в сельском хозяйстве.

Учитывая вышеизложенное, повышение конкурентоспособности сельского хозяйства РА, совершенствование направленной на нее политики, требует проведения комплексных научных исследований и выдвижения на их основе обоснованных подходов и шагов, что обуславливает актуальность изучаемой темы.

**Цель диссертации** – выявление проблем совершенствования политики повышения конкурентоспособности сельского хозяйства РА и предложение

путей их решения. В контексте реализации этой цели в диссертации были намечены **следующие задачи**:

- представить сущность конкурентоспособности отрасли, обуславливающие ее факторы, критерии показатели и методы оценки,
- выдвинуть интегральный показатель оценки конкурентоспособности сельского хозяйства и на его основе оценить уровень конкурентоспособности сельского хозяйства РА,
- обосновать возможности реализации государственной политики повышения конкурентоспособности сельского хозяйства,
- проанализировать тенденции изменения показателей, характеризующих конкурентоспособность сельского хозяйства РА,
- изучить международный опыт политики повышения конкурентоспособности сельского хозяйства,
- оценить влияние текущей государственной политики на повышение конкурентоспособности сельского хозяйства РА,
- оценить количественное влияние факторов, обуславливающих конкурентоспособность сельского хозяйства,
- предложить основные направления совершенствования политики повышения конкурентоспособности сельского хозяйства РА и оценить их эффективность.

**Предметом исследования** являются проблемы политики повышения конкурентоспособности сельского хозяйства РА, возможности и механизмы их решения, **а объектом исследования** – отрасли сельского хозяйства РА, хозяйствующие субъекты в сельском хозяйстве, политика, проводимая государственными органами в агропродовольственной сфере.

Среди результатов анализов и исследований, проведенных в диссертации, **научной новизной** можно считать следующее:

1. На основе предложенного интегрального показателя конкурентоспособности сельского хозяйства был оценен уровень внутренней конкурентоспособности сельского хозяйства РА.
2. Выявлена количественная связь между отдельными результативными признаками, характеризующими уровень конкурентоспособности сельского хозяйства РА, и бюджетными ассигнованиями отрасли.
3. В результате регрессионного анализа выявлено совместное влияние различных факторов на отдельные результативные признаки, характеризующие конкурентоспособность сельского хозяйства РА (включая степень влияния каждого из рассмотренных факторов).
4. Предложены пути решения проблем совершенствования политики повышения конкурентоспособности сельского хозяйства РА и оценена эффективность отдельных путей.

## LUSINE HAMAZASP TSPNETSYAN

### MAIN DIRECTIONS FOR IMPROVING THE POLICY FOR INCREASING COMPETITIVENESS OF RA AGRICULTURE

The dissertation was submitted for the degree of Candidate of Economic Sciences in the specialty 08.00.02 - "Economy, the economics of its spheres and control" The defense of the dissertation will take place at 13<sup>30</sup> on September 27, 2024 at a meeting of the Specialized Council 015 in Economics of the Committee on Higher Education and Science of the Republic of Armenia, operating at the Yerevan State University, at the address: 0025, st. Kh. Abovyan 52, Yerevan, RA.

#### ABSTRACT

At the present stage of the development of agriculture in the Republic of Armenia, among the many problems facing the sphere, increasing competitiveness stands out as significant. Ensuring the latter is due to many factors, the scope of which is wide: it includes both the production processes of agriculture itself and the relationships associated with them, the external and internal market conditions of food products, the presence of various infrastructures and the level of perfection of their activities. The scope of the mentioned factors also includes the legislative framework regulating the agricultural sector, relevant government levers, and mechanisms. Therefore, one of the effective levers for solving the problem of increasing the competitiveness of agriculture is the implementation of targeted state policy in this area.

Solving the problems of increasing the competitiveness of agriculture is important from the point of view of increasing the level of food security of the country, production efficiency, improving the balance of foreign trade in products of agricultural origin, and increasing the income of economic entities in agriculture.

Taking into account the above-mentioned, increasing the competitiveness of RA agriculture and improving policies aimed at the latter requires conducting comprehensive scientific research and, on its basis, proposing sound approaches and steps. The latter determines the relevance of the topic being studied.

**The purpose of the dissertation** is to reveal the problems of improving the policy of increasing the competitiveness of agriculture in the Republic of Armenia and to propose ways to solve them. In the context of achieving this goal, **the following objectives** were outlined within the framework of the dissertation:

- to introduce the essence of the competitiveness of the branch, the factors determining it, evaluation criteria, indicators, and methods,
- to propose an integral indicator for evaluating the competitiveness of agriculture and, on its basis, assess the level of competitiveness of agriculture in the Republic of Armenia,

- to substantiate the possibilities of implementing state policy to increase the competitiveness of agriculture,
- to analyze trends in changes in indicators characterizing the competitiveness of agriculture in the Republic of Armenia,
- to study international experience in policies to increase the competitiveness of agriculture,
- to assess the impact of current state policy on increasing the competitiveness of agriculture in the Republic of Armenia,
- to assess the quantitative influence of factors determining the competitiveness of agriculture,
- to propose the main directions for improving the policy of increasing the competitiveness of agriculture in the Republic of Armenia and evaluate their effectiveness.

**The subject of the research** is the problems of the policy of increasing the competitiveness of agriculture in the Republic of Armenia, the possibilities and mechanisms for solving them, and **the object** is the agricultural sectors of the Republic of Armenia, economic entities in agriculture, and the policies conducted by government bodies in the agrarian- food sector.

From the results of analyses and research conducted in the dissertation, the following can be considered **as a scientific novelty**:

1. The level of internal competitiveness of agriculture in the Republic of Armenia was assessed based on the proposed integral indicator of agricultural competitiveness.
2. A quantitative relationship has been revealed between individual outcome features characterizing the level of competitiveness of agriculture in the Republic of Armenia and the budgetary allocations of the branch.
3. As a result of regression analysis, the joint influence of various factors on individual outcome features of efficiency characterizing the competitiveness of agriculture in the Republic of Armenia was revealed (including the influence of each of the factors under consideration).
4. Ways to solve the problems of improving the policy of increasing the competitiveness of agriculture in the Republic of Armenia were proposed and the effectiveness of individual ways was assessed.

